



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Երևան, 0025, Արմվյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> •  
52<sup>a</sup> Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,  
armphilology@ysu.am, [www.ysu.am](http://www.ysu.am)

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 4**  
**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝**  
**2022 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

*Օրակարգում՝*

1. Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
2. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստացիա:
3. Դոցենտության համար դիմած թեկնածուների գործերի քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 27-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը ներկայացրեց ամբիոնի հաշվետվությունը՝ մասնավորապես նշելով.

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության նոր միավորված ամբիոնում իրենց գիտակրթական գործունեությունն են իրականացնում 15 անդամներ՝ 2 պրոֆեսոր /մեկը՝ հրավիրյալ/, 6 դոցենտ և 7 ասիստենտ: Ամբիոնն ունի 2 առկա ասպիրանտ, որոնցից մեկը՝ օտարերկրյա, 6 հայցորդ:

Ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր

լեզվաբանության հիմնահարցերի ուսումնասիրությամբ, այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես և գիտահետազոտական աշխատանքով: Յուրաքանչյուր ուստարվա նման վերանայվել և թարմացվել են առարկայական ծրագրերը, քննությունների հարցաշարերը:

Ապրիլին ամբիոնը կազմակերպեց օլիմպիադա՝ «<Լավագույն գրաբարագետ>> անվանակարգով, որին մասնակցեցին ուսանողներ թե՛ հայ բանասիրության, թե՛ հարակից ֆակուլտետներից: Արդյունքների ամփոփումը եզրափակվեց գեղեցիկ միջոցառմամբ: Նշենք, որ ամբիոնը սերտորեն համագործակցում է ֆակուլտետի ՈՒԽ-ի, ՈւԳԸ-ի հետ՝ շատ հարցերում աջակցելով ուսանողությանը:

Ամբիոնի և «<Մեդրիի տարածաշրջանի զարգացման հիմնադրամի>> հոգաբարձուների խորհրդի, ի մասնավորի՝ նրա ներկայացուցիչ Արմեն Ռուբենի Սաքապետոյանի համագործակցության շնորհիվ ս/թ հոկտեմբերի 12-ին կնքվեց պայմանագիր հայ բանասիրության երրորդ կուրսի ուսանողուհի /պայմանը ծագմամբ Լեոնահայաստանից լինելն էր/ Ռայա Ասատրյանի ուսման վարձը մինչև ուսումնառության ավարտը փոխհատուցելու մասին այն պայմանով, որ նա ավարտելուց հետո առնվազն 5 տարի իր մասնագիտությամբ աշխատի Մեդրիում: Ծրագիրը լինելու է շարունակական: Նույն Արմեն Սաքապետոյանի հովանավորությամբ այս ամառ հիմնովին վերանորոգվեց հ. լ. պատմության և ընդ. լեզվաբանության ամբիոնը՝ հարստանալով ԵՊՀ երջանկահիշատակ պրոֆեսոր Ռ. Սաքապետոյանի անձնական գրադարանի արժեքավոր գրքերով:

Օրերս ամբիոնը կնքեց հուշագիր «Գիտական Հետազոտությունների Զարգացման Կենտրոն» հիմնադրամի հետ /գործադիր տնօրեն՝ Հրաչյա Արզումանյան/ ուսանողների ուսումնառության կազմակերպման մասին, ըստ որի՝ փոխհամաձայնեցված թեմայով ավարտական կամ մագիստրոսական թեզ գրող ուսանողը ավարտելուց հետո ապահովվելու է աշխատանքով /ունենք այսպիսի 1 ուսանող/:

Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում ծավալել են գիտահետազոտական գործունեություն՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 33 հոդված:

«Արդի հայերենի քերականության հիմնախնդիրներ» հանրապետական երկօրյա գիտաժողովում զեկուցումներով հանդես են եկել պրոֆ. պրոֆ. Ա. Աբաջյանը, Լ. Խաչատրյանը, դոցենտներ Ն. Դիլբարյանը, Ա. Խաչատրյանը, իսկ դոց. Ս. Ավետյանը՝ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային և «Ա. Սուքիասյան, Ռ. Իշխանյան» հանրապետական գիտաժողովներում:

Իրենց թեկնածուական ատենախոսությունները սեպտեմբեր-հոկտեմբերին պաշտպանեցին ամբիոնի հայցորդներ Լիլիթ Հակոբյանը /գիտ. ղեկավար Ա. Աբաջյան/ և Նարինե Մելքոնյանը /գիտ. ղեկավար լուսահոգի Ա. Աբրահամյան/:

2021թ. հոկտեմբերից ամբիոնում իրականացվում է գիտության պետական կոմիտեի պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման մրցույթում հաղթած գիտական թեման՝ «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր» 3 տարի ժամկետով /ղեկավար՝ Ա. Աբաջյան, անդամներ՝ Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ս. Կարապետյան/: Ամբիոնը սույն ծրագրի շրջանակներում համալրվել է դյուրակիր համակարգչով և պրոյեկտորով:

**Օրակարգի 2 - րդ՝** հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի առիթով առանձին - առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների հեռակա ուսուցման ասպիրանտները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես՝

**ա/ԼՄԵՑԻՆ** – Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ **Աստղիկ Արարատի Օհանյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Աստղիկ Օհանյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Հովհաննես Գրիգորյանի պոետիկան», գիտական ղեկավարն է բան. գիտ. թեկն., դոց. Ս. Գրիգորյանը:

Նա մասնակցել է պարտադիր և կամրնտրական մի շարք դասընթացների: Ատենախոսության թեմայի հետ կապված ուսումնասիրում է տեսական նյութեր և արխիվներ: Հրատարակել է մեկ հոդված, աշխատում է նոր հոդվածի վրա:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ **Աստղիկ Արարատի Օհանյանին** ատեստավորել:

**բ/ ԼՄԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Անի Բաբիկի Օհանյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Անի Օհանյանի ատենախոսության թեման ուսումնասիրության փուլում է, իսկ հաշվետու ժամանակաշրջանում ասպիրանտուրայի համար պարտադիր և կամրնտրական դասընթացներից հեռակա ասպիրանտը ստացել է համապատասխանաբար 8 և 16 կրեդիտ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ **Անի Բաբիկի Օհանյանին** ատեստավորել:

**Օրակարգի 3-րդ հարցի** առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց դոցենտության համար դիմած թեկնածուների հայտերը: Գիտխորհրդի անդամները մասնավորապես՝

**ա/ԼՍԵՑԻՆ.**– Հայ բանասիրության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանի հաղորդումը հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Վիկտորյա Ռուդիկի Մուրադյանի՝ դոցենտի կոչման գործընթացին երաշխավորություն տալու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ն. Դիլբարյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ ասիստենտ Վ. Մուրադյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2008 թվից նա աշխատում է ԵՊՀ-ում: 2011թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ոճագիտության և խոսքի մշակույթի հարցերը Հ. Աճառյանի աշխատություններում» թեմայով: Ունի տպագրված 9 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Վերջին հինգ տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4,7:

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի՝ սույն թվի նոյեմբերի 16-ին կայացած նիստում ամբիոնը երաշխավորել է Վ. Մուրադյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Վիկտորյա Ռուդիկի Մուրադյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչման համար նախատեսված ընթացակարգին:

**բ/ԼՍԵՑԻՆ.**– Հայ բանասիրության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանի հաղորդումը հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Նարինե Վարուժանի Մարկոսյանի՝ դոցենտի կոչման գործընթացին երաշխավորություն տալու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ն. Դիլբարյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ ասիստենտ Ն. Մարկոսյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2011 թվից նա աշխատում է ԵՊՀ-ում: 2015թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Անցյալ և ապառնի դերբայների

արտահայտությունը հայերենում>> թեմայով: Ունի տպագրված 9 գիտական հոդված և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Վերջին հինգ տարվա՝ նրան վերաբերող սոցիոլոգիական հարցման տվյալների միջին թվաբանականը կազմում է 4,02:

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի՝ սույն թվի նոյեմբերի 16-ին կայացած նիստում ամբիոնը երաշխավորել է Ն. Մարկոսյանին:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասիստենտ Նարինե Վարուժանի Մարկոսյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի կոչման համար նախատեսված ընթացակարգին:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝  
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ  
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**